ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«ՍիվիլՆեթ» առցանց հեռուստատեսությամբ 26.01.2022-ին հրապարակված «Բորիս Ավագյանի նոր արկածները. նա կեղծ փաստեր է ներկայացնում իր դեմ քրեական գործի մասին» վերտառությամբ նյութի վերաբերյալ

Դիմող՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի Fip.am «Փաստերի ստուգման հարթակի» գլխավոր խմբագիր Հակոբ Կարապետյան:

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա.ՓԱՍՏԵՐ

1. 2022թ. ապրիլի 20-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ստացել է ՍիվիլՆեթ առցանց հեռուստատեսությամբ 26.01.2022-ին հրապարակված «Բորիս Ավագյանի նոր արկածները. նա կեղծ փաստեր է ներկայացնում իր դեմ քրեական գործի մասին» վերտառությամբ նյութի (https://archive.fo/eolbl) վերաբերյալ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ FIP.am «Փաստերի ստուգման հարթակի» գլխավոր խմբագիր Հակոբ Կարապետյանի դիմումը:
2. Բողոքարկվող նյութի ինտերնետային հղումը՝ https://archive.fo/eolbl#selection-1279.1-1279.87
3. Դիտորդ մարմինը 2022թ. մայիսի 17-ին ՍիվիլՆեթին

նամակով տեղեկացրել է դիմումի մասին:

4. «Իրազեկ քաղաքացիների միավորումը» (ԻՔՄ) գտնում է, որ ՍիվիլՆեթի հրապարակած նյութը պարունակում է «Փաստերի ստուգման հարթակի» (ՓՍՀ) նյութից կատարված գրագողություն:

5. Դիմումատուն գրում է. *«Խնդրո առարկա նյութի «Բորիս Ավագյանի նկատմամբ գործ է հարուցվել դեռ 2016» բաժինը (բացառությամբ վերջին պարբերության) շարադրանքով համընկնում է ՓՍՀ-ի նշված նյութի «Ո՞վ է Բորիս Ավագյանը» բաժնի շարադրանքի հետ: Այլ կերպ ասած՝ բաժնի (բացառությամբ ինֆորմացիոն առիթ հանդիսացած վերջին պարբերության) 16 նախադասություններից 15-ը արտահայտում են ՓՍՀ-ի նյութի շարադրանքը: … Ընդ որում, շարադրանքն արտահայտված է ամբողջությամբ նույն հիպերհղումներով և (մեկ բացառությամբ) նույն հերթականությամբ: Այսպիսով, «Փաստերի ստուգման հարթակը» գտնում է, որ ՍիվիլՆեթի նշված նյութի նշված բաժնում (բացառությամբ ինֆորմացիոն առիթ հանդիսացած վերջին պարբերության) առկա է գրագողություն թե՛ թվարկված փաստերի մեկտեղման միջոցով Բորիս Ավագյանի կենսագրության ամբողջական ներկայացման մասով և թե՛ ոչ մեջբերման ձևով շարադրանքի արտատպման մասով»*:

6. Հակոբ Կարապետյանը հարկ է համարել ընդգծել, որ նշվածը ՍիվիլՆեթի նյութի համարյա ամբողջական մասն է, և ՍիվիլՆեթը նյութի՝ խնդրո առարկա բաժնից առաջ միայն մեկ նախադասությամբ գրել է, որ «*Փաստերի ստուգման հարթակը» դեռևս նախորդ տարվա մարտին ամբողջապես ներկայացրել էր Բորիս Ավագյանի քրեական գործի մանրամասները՝ ռուսական աղբյուրների հիման վրա»*: Ըստ FIP.am «Փաստերի ստուգման հարթակի» գլխավոր խմբագրի՝ *«այս կերպ ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, որ ՓՍՀ-ն գրել է միայն քրեական գործի մասին և ոչ վերոնշյալ բոլոր կենսագրական փաստերի, ինչպես նաև որևէ բարեխիղճ կերպով նշված չէ, որ մյուս փաստերը կամ դրանց շարադրանքը վերցված են ՓՍՀ-ի նյութից, կամ որ գոնե ՓՍՀ-ն նախկինում թվարկել է այս բոլոր փաստերը»:*

7. Դիմումում ներկայացված է նաև **ՍիվիլՆեթի դիրքորոշումը**, ըստ որի՝ «*ՍիվիլՆեթը պահպանել է հղում տալու բոլոր կանոնները՝ հոդվածում նշելով, որ ««Փաստերի ստուգման հարթակը» դեռ նախորդ տարվա մարտին ամբողջապես*

ներկայացրել էր Բորիս Ավագյանի քրեական գործի մանրամասները՝ ռուսական աղբյուրների հիման վրա»: Շեշտվում է, որ հոդվածում դրվել է Fip.am-ի տվյալ հոդվածի ակտիվ հղումը, և միայն դրանից հետո են հոդվածից մեջբերումներ արվել: Նշված է նաև, որ *«ՍիվիլՆեթի հոդվածի հեղինակ Հայկ Հովհաննիսյանը անցած տարի աշխատել է FIP-ում և եղել է տվյալ նյութի համահեղինակը»:*

8. Այսպիսով, «Փաստերի ստուգման հարթակը» և ՍիվիլՆեթը միասին դիմում են ԶԼՄ-ների դիտորդ մարմնին՝ *«որպես անկախ ու չեզոք արբիտր՝ պարզելու, թե արդյո՞ք առկա է գրագողություն»:*
9. Դիտորդ մարմինը 2022թ.ապրիլի 28-ի նիստում նախաձեռնել է դիմումի քննարկումը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Հեղինակը

Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը:

Հոդված 7. Համահեղինակությունը

1. Երկու կամ ավելի անձանց համատեղ ստեղծագործական աշխատանքով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է համահեղինակներին համատեղ՝ անկախ ստեղծագործության կառուցվածքից:

2. Ստեղծագործությունն ամբողջությամբ օգտագործելու իրավունքը պատկանում է համահեղինակներին համատեղ: Համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց միջև կնքված պայմանագրով: Պայմանագրի բացակայության դեպքում ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է բոլոր հեղինակներին համատեղ, իսկ ստացվող եկամուտը նրանց միջև բաշխվում է հավասար:

Համահեղինակությամբ ստեղծված և անբաժանելի ամբողջականություն համարվող ստեղծագործության համահեղինակներից ոչ մեկն իրավունք չունի առանց

հիմնավորված պատճառաբանությունների արգելելու մյուս համահեղինակներին ստեղծագործության օգտագործումը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները:

2.4. Հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ և արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

- «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ FIP.am «Փաստերի ստուգման հարթակի» գլխավոր խմբագիր Հակոբ Կարապետյանի և ՍիվիլՆեթ առցանց հեռուստատեսության վերոհիշյալ դիմումը,

ողջունում է

- վերը նշված վեճը լրատվամիջոցների ինքնակարգավորման շրջանակներում լուծելու պատրաստակամությունը և հատկապես գնահատում է Դիտորդ մարմնին համատեղ դիմելու փաստը:

Դիտորդ մարմինը, **հաշվի առնելով** կողմերի ներկայացրած բոլոր հանգամանքները և փաստարկները, դրանց համեմատությունը հրապարակման բովանդակության հետ,

արձանագրում է.

- Մի շարք գործոններ, մասնավորապես, ՍիվիլՆեթի հրապարակման մեջ ՓՍՀ «Ո՞վ է Բորիս Ավագյանը» նյութի հիշատակումը որպես տեղեկատվության աղբյուր, նյութում հիպերհղման առկայությունը, ՓՍՀ նախկին և ՍիվիլՆեթի ներկայիս աշխատակից Հայկ Հովհաննիսյանի հեղինակությունը կամ համահեղինակությունը, ինչպես նաև այս լրագրողի՝ նախկին տեղում կատարած աշխատանքի արդյունքներն օգտագործելու իրավունքը սահմանափակող հատուկ պայմանագրային պարտավորությունների բացակայությունը բավարար հիմքեր չեն տալիս վեճի առարկան գնահատելու որպես գրագողություն:

Միևնույն ժամանակ,

- տեքստի զգալի մասերը նախորդ հրապարակումից բառացի կամ գրեթե բառացի մեջբերելիս չակերտներ դնելուց խուսափելը, սկզբնաղբյուրին կոնկրետ հղումներ չկատարելը, ընթերցողին պարզորոշ չներկայացնելը, թե նախկինում ՓՍՀ-ում հրապարակված հոդվածի կոնկրետ որ փաստերն են օգտագործվել ՍիվիլՆեթի նյութում, և թե որքանով կարող է ՍիվիլՆեթի հրապարակումը հեղինակային իրավունքի տեսանկյունից ընկալվել որպես ինքնուրույն ստեղծագործություն, թույլ է տալիս խոսել տեղեկատվության աղբյուրների նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի մասին:

Դիտորդ մարմինը հայաստանյան լրատվամիջոցներին կոչ է անում՝

- նման հակասություններից ու վեճերից խուսափելու համար ծայրահեղ ճշտակատարություն հանդես բերել հեղինակային իրավունքի հարցում:

Թեև ՍիվիլՆեթը ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ և պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն այդ լրատվամիջոցին հորդորում է տարածել այն՝ դրանով իսկ նպաստելով պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանությանը:

Ընդունվել է 2022թ. մայիսի 11-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ,

Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ,

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ,

«Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ,

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ,

Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: